ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ՝ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «STEP» (Գիտության և տեխնոլոգիայի կրթական ծրագիր) ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	MEMORANDUM OF UNDERSTANDING ON INCLUDING «STEP» (Science & Technology Education Program) PROGRAM IN GENERAL EDUCATION OF HIGH SCHOOLS AND COLLEGES
ք. Երևան, 2024թ.	Yerevan, 2024
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միությունը» (ՏՀՏԳՄ), «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն, «ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարան» հիմնադրամը և (այսուհետ միասին՝ Կողմեր, առանձին՝ Կողմ):	The Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, Union of Employers of Information and Communication Technologies (UEICT), "Synopsys Armenia" CJSC and AGBU Armenian Virtual College (AVC) (hereinafter collectively referred to as Parties and individually as "Party")
կարևորելով տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ոլորտը՝ որպես երկրի տնտեսական և գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն բաղադրիչներից և գերակա ուղղություններից մեկը, **գիտակցելով** ՏՀՏ կիրառության արդյունավետությունը՝ որպես ուսումնական գործընթացում կրթության որակի, մատչելիության և արդիականության բարձրացմանն ուղղված բարեփոխումների լայն հնարավորություն, **նպատակ ունենալով** նպաստել Հայաստանի Հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «STEP» ծրագրի ներդրմանը, գործիքների տիրապետմանը և 2027 թվականի սովորողների վրա այդ գիտելիքի ազդեցության գնահատմանը, **ղեկավարվելով** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ **կնքեցին** սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր), որի նպատակն է համագործակցության հիմք ստեղծել Կողմերի համար՝ ստորև նախատեսված համատեղ գործունեության ծավալման համար:	**emphasizing the importance** of Information and Communication Technology industry (hereinafter referred to as ICT) as one of the most important components and top-priority directions of the country's economic, scientific and technical development, **realizing** the efficiency of applying ICT as an ample opportunity in raising the quality, availability and significance of education in the process of education improvement; **aiming at** contribution to professional orientation of high-school and college students in ICT specialization, introducing them the role and implementation of ICT in the scientific and technological developments taking place in the world and to assess the impact of that knowledge on the students of 2027; **governed by principles, requirements and legal norms of the legislation of the Republic of Armenia,** **signed this Memorandum of Understanding (hereinafter referred to as "Memorandum") which aims at establishing a basis for cooperation between the Parties with regards to implementation of below activities described herein.**
Կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության հետևյալի մասին. Հուշագրի շրջանակներում մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված ավագ դպրոցներում և քոլեջներում, որոնք կազմում են նաև Հուշագրի մաս, ներդնել **«STEP» ծրագիրը, որն իր մեջ ներառում է բարձր**	**The cooperation between the Parties may include the following:** In the framework of the Memorandum, implement the STEP program, incorporating various high-tech, in-demand subjects in high schools and colleges, which is also a constituent part of the Memorandum.

տեխնոլոգիական ոլորտի ԲՏՃՄ բնագավառի առարկաները:	
Ի կատարումն վերոնշյալի՝ 1. Կողմերը պարտավորվում են. 1) աջակցել միմյանց ծրագրի իրականացման հարցում, 2) համագործակցել միմյանց հետ սույն Հուշագրում հռչակված սկզբունքների շրջանակներում, այնքանով, որքանով դա չի հակասում ՀՀ օրենսդրությանը, Կողմերի ներքին կանոնակարգերին ու որոշումներին:	In pursuance of the above: 1. The Parties agree upon: 1) supporting one another in project implementation; 2) cooperating with one another within the scope of the declared principles of this Memorandum as far as it does not contradict the RA legislation, internal procedures and resolutions of the Parties.
2. Կողմերի մասնակցությունը սույն Հուշագրի նպատակների իրականացման ուղղությամբ հետևյալն է՝ 2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 1) ապահովում է STEP ծրագրի շրջանակներում «Արհեստական բանականություն» և այլ մասնագիտական առարկաների ներդրումը, 2) մասնակցում է STEP ծրագրի մշակման գործընթացին և հաստատում է մասնագիտական առարկաների ծրագրերը, 3) մասնակցում է ավագ դպրոցների և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ընտրությանը՝ մրցութային հանձնաժողովի կողմից, 4) աջակցում է STEP ծրագրի հանրային իրազեկմանը:	2. The participation of the Parties aimed at fulfilling the purpose of this Memorandum may include as described below: 2.1 For the RA Ministry of Education and Science: 1) ensure the implementation of "STEP" program which includes AI and other subjects, 2) elaborate and approve the criteria and the teaching materials for new subjects. 3) takes part in high school and college selecting process by competition, 4) supports public awareness
2.2 ՏՀՏԳՄ-ն իրականացնում է 1) Նախարարության հետ համատեղ աշխատանքային խմբի ձևավորում 2) Դպրոցների և քոլեջների ընտրության մրցույթի կազմակերպում, 3) Ուսուցիչների վերապատրաստման միջոցառումների կազմակերպում, 4) Ծրագրի մոնիթորինգ, 5) Տեսադասընթացների նկարահանում, 6) Դպրոցների, քոլեջների և ԿԳՄՍ ու ԲՏԱ նախարարությունների հետ աշխատանքային գործընթացների կազմակերպում:	2.2 For UEICT: 1) Forms a joint working group with the Ministry 2) Organizes selection competition of schools and colleges 3) Organizes teacher training events 4) Implements project monitoring 5) Films video courses 6) Organizes working processes with schools, colleges and Ministry of ESCS.
2.3 «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն 1) իրականացնում է «STEP» ծրագրի առարկայական ծրագրի մշակումը 2) իրականացնում է կամ համագործակցում է ծրագրով նախատեսված առարկաների ուսուցիչների վերապատրաստումը:	2.3 For "Synopsys Armenia" CJSC: 1) participates in the process of elaborating the criteria and the teaching materials for "STEP" program subjects; 2) carries out or cooperating on realizing the training of teachers.
2.4 «ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարան» հիմնադրամը 1) բարելավում է ծրագիրը՝ ընդլայնելով էլեկտրոնային ուսուցման փորձը, 2) ապահովում է ծրագրի/դասընթացի տարածումը իր	2.4 For AGBU Armenian Virtual College Fund: 1) Improve the program by enhancing the eLearning experience. 2) Ensure the dissemination of the program/course via its LMS.

կրթահարթակի միջոցով, 3) համակարգում է սովորողների ներգրավման գործընթացը (գրանցումից մինչև ավարտական նախագծեր), 4) ցուցաբերում է տեխնիկական աջակցություն սովորողներին և ուսուցիչներին:	3) Manage the student engagement process (enrollment to final projects). 4) Offer technical support for students and instructors.
3. Այլ դրույթներ	**3. Other provisions**
3.1 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և Կողմերի համար կրում է բացարձակապես հռչակագրային բնույթ:	**3.1** This Memorandum enters into force as of the moment of its signing and is exclusively of declaratory nature.
3.2 Սույն Հուշագրի փոփոխությունները կարող են իրականացվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ և մյուս Կողմերի գրավոր համաձայնությամբ:	**3.2** Amendments to this Memorandum may be made by the initiative of any of the Parties with the written agreement of the other Parties.
3.3 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հրաժարվել սույն Հուշագրի շրջանակներում մյուս Կողմերի հետ համագործակցությունից՝ այդ մասին նախապես 1 (մեկ) ամիս առաջ գրավոր ծանուցելով նրանց:	**3.3** Each of the Parties is entitled to refuse to cooperate with other Parties within the scope of this Memorandum with a prior 1 (one) month notifying about it in written form.
3.4 Կողմերը սույնով պարտավորվում են պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները և չձեռնարկել որևէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները՝ կապված սույն Հուշագրով նախատեսված իրենց իրավունքների և պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առևտրային կազմակերպություններին, իշխանության և ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մասնավոր ընկերություններին և նրանց ներկայացուցիչներին:	**3.4** The Parties hereby undertake to comply with the requirements of anti-corruption legislation and not to engage in any activities that may breach the requirements of anti-corruption legislation, in connection with performance of their rights and obligations pursuant to the present Memorandum, including (but not limited to) solicitation, approval, promise or transfer of any unlawful payments, including (but not limited to) bribe, in monetary or in any other form to any natural or legal persons, including (but not limited to) commercial organizations, government and autonomous bodies and their officers, private companies and their representatives.
3.5 Կողմերից մեկի կողմից սույն Հուշագրի կետ 3.4.-ով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում, մյուս Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի արտադատական կարգով հրաժարվելու սույն Հուշագրի կատարումից: Կողմերը չեն հատուցում մյուս Կողմի վնասները սույն Հուշագրի՝ սույն կետի համաձայն լուծման դեպքում:	**3.5** Upon the breach of the obligations stipulated by point 3.4 of this Memorandum, each of the other Parties is entitled to refuse to perform this Memorandum unilaterally and out-of-court. The Parties do not reimburse the losses incurred by the other Party upon termination of this Memorandum pursuant to this point.
3.6 Սույն Հուշագիրը կնքված է 4 (չորս) օրինակից՝ հայերեն և անգլերեն, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում հայերեն տեքստը գերակայող է:	**3.6** This Memorandum is made in Armenian and in English languages in 4 (four) legally equal copies. Each Party shall get one copy of it. In case of discrepancies between the texts in Armenian and English languages, the Armenian version shall prevail.
3.7 Կողմերը հնարավոր են համարում սույն Հուշագրով նախատեսված նպատակներն ու ստանձնած	**3.7** The Parties deem it possible to sign contracts and agreements within the scope of this Memorandum for

պարտավորություններն իրագործելու և կատարելու համար սույն Հուշագրի շրջանակներում պայմանագրերի ու համաձայնագրերի կնքումը:	achieving the goals and performing obligations under this Memorandum.
Հուշագիրը ստորագրեցին	**This Memorandum is signed by:**
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն ՀՀ, ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 5, Կառավարական տուն նախարար **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ** Ստորագրություն	**RA Ministry of Education, Science, Culture and Sport** 5 Vazgen Sargsyan str., Government House, Republic Sq., 0010, Yerevan, RA Minister **ZHANNA ANDREASYAN** Signature
ՏՀՏԳՄ ՀՀ, ք. Երևան, 0010 Գայի պողոտա 1/21 գործադիր տնօրեն **ԷԴՈՒԱՐԴ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ** Ստորագրություն	**UEICT** 1/21 Gay ave., 0010, Yerevan, RA Executive Director **EDUARD MUSAYELYAN** Signature
«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, 0026, Արշակունյաց 39/7 տնօրեն **ՀՈՎԻԿ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ** Ստորագրություն	**"Synopsys Armenia" CJSC** 39/7 Arshakunyats ave., 0026, Yerevan, RA Director **HOVIK MUSAYELYAN** Signature
«ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարան» հիմնադրամ ՀՀ, ք. Երևան, 0070, Ա. Մանուկյան 9 գործադիր տնօրեն **ԵՐՎԱՆՏ ԶՈՐՅԱՆ** Ստորագրություն	**AGBU Armenian Virtual College Fund** 9, A. Manukyan, 0070, Yerevan, RA Executive Director **YERVANT ZORIAN** Signature